

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 11-ին՝ երկուշաբթի օրը, ամառային արձակուրդներից հետո, հոգևոր ճեմարանի դռները աղոթքով ու օրհնությամբ վերաբացվեցին ուսանողության առաջ: Սկսվեց 1967—1968 ուսումնական տարին:

Վերաբացման հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Հանդիսությունն սկսվեց ՀՍՍՀ պետական հիմնի նվագով: Այնուհետև, հոգևոր ճեմարանի սաների երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին», «Նմանեալ Մովսիսի», «Աշակերտք Քրիստոսի» շարականները և ճեմարանի քայլերգը:

Ճեմարանի վերակացու արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը ընթերցեց Մատթեոսի Ավետարանից սերմնացանի առակը, իսկ Բ լսարանի ուսանող Հովհաննես Գըվըգյանը՝ Նարեկից սուրբ Հոգու ուղղած աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Ճեմարանի վերատեսուչ տ. Ներսես ծ. վարդապետը ողջունելով հոգևոր ճեմարանի 23-րդ ուսումնական տարեշրջանի բացումը, ուսանողներին դիմեց բովանդակալից խրատականով՝ հորդորելով այս տարին ևս լինի աշխատասիրության, կարգապահության, աղոթքի և ինքնամփոփման տարի, հայցելով Աստծու օգնականությունն ու Վեհափառ Հայրապետի օրհնությունը կրթական, հոգևոր այս հաստատության աշխատանքների արդյունավորության, պտղաբերության, ուսանողության իմացական, ոգեկան ուժերի աճման և հարստացման համար:

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը Իր պատգամն ու օրհնությունը տրվեց ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողության՝ հորդորելով լինել որքան աշխատասիրության, նույնքան և աղոթքի մարդը:

Հոգևոր ճեմարանի 1967—1968 ուսումնական տարվա վերաբացման հանդիսությունն ավարտվեց հայրապետական օրհնությամբ և «Պահպանիչ»-ով:

Այս տարի հոգևոր ճեմարանի ուսանողության ընդհանուր թիվը լինելու է 40՝ բաժանված Ա, Բ, Գ դասարանական և Ա, Բ, Գ լսարանական բաժինների վրա, ըստ հետևյալի.

Ա դասարան՝		7
Բ	»	8
Գ	»	7
Ա լսարան՝		4
Բ	»	3
Գ	»	3

Սպասվում են 4 ուսանողներ Բուխարեստից և 5-ը՝ Բեյրութից:

Օգոստոսի 31-ին, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանի տեսչարանում գումարվեց մանկավարժական խորհրդակցական ժողով, ուր մտքերի փոխանակությունից հետո վերանայվեցին ու հաստատվեցին 1967—1968 ուսումնական տարվա պլանը, դասաժամերը և ամբողջ տարվա գործունեության ծրագիրը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի վերաբացման առիթով, Վեհափառ Հայրապետը վեհարանում ընդունեց դասախոսներին:

Տեսչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը Ն. Ս. Օծության ներկայացրեց մանկավարժական ժողովում քննության առնված հարցերը՝ խնդրելով Նրա օրհնությունը ուսումնական նոր տարվա առիթով:

Վեհափառ Հայրապետը ուրախությամբ ողջունելով դասախոսների վերադարձը դեպի իրենց սիրելի աշխատանքը՝ դեպի հոգևոր ճեմարան, Իր գոհունակությունն ու ուրախությունը հայտնեց և զրույցի ժամանակ դասախոսների ուշադրությունը հրավիրեց մի շարք կարևոր ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վրա, ավելի արդյունավետ դարձնելու համար դասավանդությունները:

Սեպտեմբերի 12-ին՝ երեքշաբթի օրը, հոգևոր ճեմարանի կամարների տակ հնչեց կրկին դասավանդության զվարթ զանգը:

Սկսվեց 1967—1968 ուսումնական տարին: